



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ընդունվել է

գիտական խորհրդի 29.06.2016թ.

թիվ 7 նիստի որոշմամբ,

Հաստատվել է

Ռեկտորի _____ 19.07.16 _____ թ.

թիվ _____ 74 Մ _____ հրամանով

ռեկտոր՝ Մ.Զ. Նարիմանյան

1. Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլաններում ներառված բոլոր առարկաների (դասընթացների, մոդուլների) մշակման, վերանայման և հաստատման գործընթացն իրականացվում է՝ համաձայն սույն ընթացակարգի:

2. Դասընթացների մշակման, վերանայման և հաստատման գործընթացն իրականացվում է ըստ սահմանված ձևաչափի ու կից ներկայացված ուղեցույցի:

3. Նոր դասընթացի կամ առկա դասընթացների ծրագրերը ստեղծելու և վերանայելու համար նախաձեռնող կողմեր են.

ա) կրթական ծրագրերի բաժինը,

բ) ֆակուլտետը,

գ) ամբիոնը (կուրսը):

4. Նախաձեռնող կողմը գրավոր դիմում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին (համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի նախագահ)՝ հիմնավորում ներկայացնելով դասընթացի մշակման (վերանայման) վերաբերյալ:

5. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը գրությունը ուղարկում է համապատասխան առարկայական ուսումնամեթոդական խորհրդին (ՈԻՄԽ)՝ գործընթացը սկսելու գրավոր հրահանգով:

6. Առարկայական ՈԻՄԽ-ի նախագահը գրությամբ դիմում է ամբիոնին (կուրսին)՝ սահմանված ձևաչափով դասընթացի նկարագիրը կազմելու վերաբերյալ (երկշաբաթյա ժամկետում): Նկարագիրն ամբիոնից ստանալուց հետո քննարկվում և ընտրվում են երկու գրախոսներ՝ ըստ վերջիններիս մասնագիտական ու մանկավարժական փորձառության: Գրախոսների դրական կարծիքի դեպքում առարկայական ՈԻՄԽ-ն ծրագիրը քննարկելուց և երաշխավորելուց հետո փաստաթղթերի փաթեթը գրությամբ ուղարկում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ փորձաքննության միջնորդությամբ:

7. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը կրթական ծրագրերի բաժնին գրավոր հանձնարարում է կազմել ներկայացված դասընթացի նկարագրի փորձագիտական եզրակացությունը:

8. Համալսարանի ուսումնամեթոդական խորհուրդը, ուսումնասիրելով դասընթացի նկարագիրը, գրախոսականները և կրթական ծրագրերի բաժնի կողմից տրված փորձագիտական եզրակացությունը, որոշում է դասընթացի նկարագրին հավանություն տալ և երաշխավորել կամ ուղարկել լրամշակման:

9. Համալսարանի ՈԻՄԽ-ի կողմից երաշխավորված դասընթացի նկարագիրը հաստատվում է ԵՊԲՀ ռեկտորի կողմից: